

ՀՈԴԿԱԾՆԵՐ

ՆԵԿՏԱՐ ՄԻՄՈՆԵԱՆ

ԱՏՈՒԳԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՅԹԵԼ/ՎԱԹԵԼ/ՎՈԹԵԼ

Հայերեն *վայթել*, *վաթել* բայերն ունեն «թափել (ջուր, արյուն), հոսել, հոսեցնել» իմաստները:

Էդ. Աղայանը «Արդի հայերենի բացատրական բառարանում» *վաթել* «թափել, հոսեցնել» բայը բերում է զավառական նշումով¹, իսկ *վայթել*—ը հղում է *վաթել*—ին²: Ոթել բայը (ոչ՝ *վոթել*)՝ դարձյալ նույն իմաստներով, բերվում է արևմտահայերեն նշումով³:

Ստ. Մալխասյանցը «Հայերեն բացատրական բառարանում» *վաթել* բայը հղում է *վայթել*, *վոթել* ձևերին «թափել, հեղուլ, դուրս թափել» իմաստներով: Նա բերում է նաև *վայթուկ* «տղամարդու սերմ», *վիթել*, *վիթվիթ* «արագաշարժ, ճապուկ», *վայթվթել* (կրկնավոր ձև *վայթել-ից*) «թափթփել, թափթփվել» իմաստներով բոլորն էլ բարբառային նշումով⁴:

Ռ. Ղազարյանը և՛ «Գրաբարի բառարանում»⁵, և՛ «Գրաբարի հոմանիշների բառարանում»⁶ բերում է միայն *վայթել* բայը «թափել, հեղուլ» իմաստներով, իսկ *վաթել*—ը՝ գրաբարյան *վայթել* հղումով, տեղ է գտել «Միջին հայերենի բառարանում»⁷:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում բերվում են *վաթել* (տես *վայթել* նշումով) և *վայթեն*, նաև ռամկական համարվող *վաթել*, *վոթել* բայերը «ի դուրս թափել, արտաքս հեղուլ, դատարկել» իմաստներով⁸:

Յր. Աճառյանը «Հայերեն արժատական բառարանում» բերում է *վայթել* բայը՝ «դուրս կամ ցած թափել, պարպել» իմաստներով, և *վաթել*, *վոթել*, *վիթեալ* ձևերը ռամկական նշումով⁹: Յր. Աճառյանն այն համարում է անհայտ ծագման բառ:

Վայթեն բայի ստուգաբանությանն անդրադառնում է Գ. Ջահուկյանը՝ «Очерки по истории письменного периода армянского языка» աշխատության մեջ: Խոսելով հ.-ե. *չ-ի՝ հայերենում օրինաչափ արտացոլումներից ունեցած շեղումների մասին նա նշում է, որ հ.-ե. *չ-ին հայերենում կարող են համապատասխանել նաև վ, բ, կ՝ օրինաչափորեն սպասվող գ-ի դիմաց:

Վայթ—են բայը (*վաթ*—, *վոթ*—, *վեթ*— արմատի տարբերակներով)՝ «հոսել, թափել, հոսեցնել» իմաստներով, նա համեմատում է լատ. *vidus* «թաց, խոնավ», *amecto* «խոնավացնել, թրջել», հին իսլանդերեն *vǫkr* «խոնավ», *vakva*, *vekkja* «թափել (արյուն)», հին հնդկերեն *aksati* «խոնավացնում է» ձևերի հետ և հանգեցնում հ.-ե. *yeg¹⁰—, —t— «խոնավ, խոնավացնել» նախածինի¹⁰:

բերում է նաև *ջրի ոթիս* բացատրությունը²², մասնավանդ եթե նկատի ունենանք հ—ե. մյուս լեզուներում առկա վերը նշված ռուս. *выдра*, հուն. *νδρος* «հիդրա, ջրային օձ», հին պրուսերեն *wadro*, հին հնդկերեն *sdras* «ջրային կենդանի» զուգահեռները: Եթե հ—ե. լեզուներում այդ արմատից կարող էին ծագել ջրային կենդանի նշանակությամբ բառեր, ապա հայերենում էլ այն կարող էր ունենալ «խոնավ տեղերում բնակվող միջատ» իմաստային զարգացումը:

Կարծում ենք, որ *վայթեմ*, *վաթեմ*, *վիթեմ* բայերի հետ իմաստային մերձավորություն են դրսևորում հայերեն *վեժ*, *վիժեմ*, *վիժակ* բառերը:

Յր. Աճառյանն «Հայերեն արմատական բառարանում» բերում է *վեժ* «դուրս քափել, դուրս հոսիլ» արմատը, որն առանձին անգործածական է, և *վիժել*, *վիժիլ*, *վիժակ*, *վիժանուտ* բառերը՝ առանց խոսելու դրանց ծագման մասին²³:

Այս արմատը այլ լեզվաբանների կողմից (է. Բենվենիստ, Յ. Բելլի, Գ. Ջահուկյան) համարվել է իրանական փոխառություն²⁴:

Վեժ արմատը և նրանով կազմված *վիժակ*, *վիժեմ*, *վիժանուտ* բառերը համապատասխանաբար «հոսանք, սահանք», «հոսել ի վայր, գահավիժել, վայրաբերել», «հոսանուտ» իմաստներով²⁵. Կարծում ենք, կարելի է կապել վերոնշյալ բայերի հետ: Իմաստային մերձավորությունը ակնհայտ է: Հնչյունական տարբերությունն էլ բացատրելի է:

Հ.—ե լեզուների տվյալները հաշվի առնելով՝ կարելի է նկատել հնչյունական համապատասխանությունների տիպաբանական ընդհանրություններ, մասնավորապես պայթական/շփական տարբերակներով արմատների առկայությունը (հմմտ. ռուս. *мигать—мжить*, *мог—у—мож—ет*, *видеть—вижу*, *логово—ложе*, հայ. *օգուտ—օժիտ*, *մեզ—մուժ*, ծետ «զավակ, սերունդ»—բրբռ. *ճիժ*, *տուգանել—տույժ*: Պարսկերենում էլ դ—ժ հնչյունային անցումը վկայվում է նույն բառերի բարբառային տարբերակներում *վարդապետ—վարժապետ*²⁶):

Այսպիսով՝ կարելի է հ.—ե. **yed—* արմատից ծագած համարել հայերեն *վայթեմ* (իր տարբերակներով), *ոթիս* և *վեժ*, *վիժեմ* բառերը:

ՕՆՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Էդ. Սդայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1351:
2. Նույն տեղում, էջ 1355:
3. Նույն տեղում, էջ 1129:
4. Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. IV, Երևան, 1945, էջ 295:
5. Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան, Անթիլիաս—Լիբանան, 2004, էջ 1330:
6. Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, 2006, էջ 626:
7. Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Բ, Երևան, 1992, էջ 353:
8. Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Ս. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Վենետիկ, 1837, էջ 778:
9. Յր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 300:
10. Դ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, стр. 265.
11. Տես նաև Գ. Ջահուկյանի նշվ. աշխ., էջ 91:
12. Вяч. Вс. Иванов, Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков, том I, М., 2007, стр. 233.

13. Նույն տեղում, էջ 235–236:
14. М. Фасмер, Этимологический словарь русского языка, том I, М., 1986, стр. 367.
15. Вяч. Вс. Иванов, указ. соч., стр. 238.
16. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, էջ 830:
17. Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. III, Երևան, 1977, էջ 312, (*մեզ բառի բացատրության մեջ*):
18. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. I, Երևան, 1944, էջ 149:
19. Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. I, Երևան, 1973, էջ 150:
20. Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. IV, էջ 336:
21. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, էջ 819:
22. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. IV, էջ 552:
23. Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. IV, Երևան, 1979, էջ 335:
24. Տեղ L. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 261:
25. Հր. Աճառյան, ՀԱԲ, հ. IV, էջ 321:

Н. Симонян

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

Предлагается этимология армянских глагольных основ $vait^C-em$ / vat^C-em / voi^C-em/viz^C-em , которые возводятся к и–е, праформе * $yed-$.

N. Simonyan

ETYMOLOGICAL COMMENTS

It is suggested the etymology of the Armenian verb stems $vait^C-em$ / vat^C-em / voi^C-em/viz^C-em . They are considered to be the reflects of IE stem * $yed-$.